ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.05.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/69

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Բողոք բերող՝ «Վարարակն» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչներ՝ Դ. Շատվերյանի, Ա. Միրզոյանի,
«Վարարակն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Բուդաղյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Վարարակն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 18.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **Գործի նախապատմությունը.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը,
2. դադարեցնել «Վարարակն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,
3. «Վարարակն» ՓԲԸ-ի հայտը՝ Հավելված թիվ 1.2-ի 22-24-րդ տողերով գնահատել բավարար:

Ընկերությունը 10.05.2022թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ խնդրել է պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել «Վարարակն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,
2. ընդունել նոր որոշում՝ «Վարարակն» ՓԲԸ-ի հայտում անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ՝ հստակ և մանրամասն նկարագրելով հայտնաբերված անհամապատասխանությունները Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:

Բողոքներ քննող անձին «Վարարակն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 18.04.2022թ.-ին:

20.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/69 համարի ծածկագիրը:

28.04.2022թ.-ին, 05.05.2022թ.-ին և 13.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 05.05.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.05.2022թ.-ին:

2. **«Վարարակն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Վարարակն» ՓԲԸ-ն 18.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վարարակն» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1.2. համաձայն, 22-24 տողերով նախատեսվել են հետևյալ սարքավորումները՝ հետևյալ տեխնիկական բնութագրով.

22	Շրջանառու պոմպ, **G=2.6 խմ/ժ, H=3.0մ**	հատ	1.00	1 տարի
23	Շրջանառու պոմպ, **G=2.3 խմ/ժ, H=3.0մ**	հատ	2.00	1 տարի
24	Շրջանառու պոմպ, **G=2.0 խմ/ժ, H=3.0մ**	հատ	1.00	1 տարի

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության /կցվում է/ 1-ին կետի համաձայն՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը լրացուցիչ ուսումնասիրել է «Վարարակն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված լրացուցիչ փաստաթղթերը /Джилекс Церкуль արտադրողի/ նշված պոմպային սարքավորումների տեխնիկական անձնագիրը /կցվում է/, և հղում կատարելով գրաֆիկին, գտել է, որ 22-24-րդ տողերով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված սարքավորումների տեխնիկական բնութագրերին՝ այն ունի էապես ավելի քիչ ջրաքանակի արտադրողականություն:

Նույն 14.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացվել է որոշում մերժել «Վարարակն» ՓԲԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն¬ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումները իրավաչափ չեն և հակասում են գնումների մասին ՀՀ օրենսդրությանը հետևյալ հիմնավորմամբ.

Ինչպես արդեն նշել ենք, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, ևս մեկ անգամն ցանկանում ենք նշել, որ Ընկերության կողմից Հավելված N 1.2-ի 22-24-րդ տողերով ներկայացրած տեխնիկական պարամետրերը լիովին համապատասխանել են Ընթացակարգի հրավերի պահանջներին:

Մասնավորապես, Ընթացակարգի հրավերի 22-24-րդ տողերով ներկայացրած սարքավորումների տեխնիկական պարամետրերը հետևյալն են՝

22	*Շրջանառու պոմպ,* ***G=2.6 խմ/ժ, H=3.0մ***
23	*Շրջանառու պոմպ,* ***G=2.3 խմ/ժ, H=3.0մ***
24	*Շրջանառու պոմպ,* ***G=2.0 խմ/ժ, H=3.0մ***

«Վարարակն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից 14.04.2022թ. տեղի ունեցած նիստի ընթացքում ուսումնասիրած լրացուցիչ փաստաթղթերը՝ /Джилекс Церкуль արտադրողի/ նշված պոմպային սարքավորումների տեխնիկական անձնագիրը վկայում են, որ 22-24-րդ տողերով ներկայացրած շրջանառու պոմպերը համապատասխանում են հրավերի պահանջներին այն է՝ G=2.6 խմ/ժ, H=3.0մ, G=2.3 խմ/ժ, H=3.0մ և G=2.0 խմ/ժ, H=3.0մ:

Նման պարագայում, գտնում ենք, որ հիմնավոր չէ գնահատող հանձնաժողովի պնդումը առ այն, որ 22-24-րդ տողերով ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, այն լիովին անհիմն է, ուստի գտնում ենք, որ «Վարարակն» ՓԲԸ-ի հայտը 22-24 տողերով ներկայացված սարքավորումները պետք է գնահատվեր բավարար:

Այսպիսով գտնում ենք, որ վերոհիշյալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 34–րոդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որոն էլ հանգեցրել է«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի և 7-րդ հոդվածի պահանջների խախտմանը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը,
2. դադարեցնել «Վարարակն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,
3. «Վարարակն» ՓԲԸ-ի հայտը՝ Հավելված թիվ 1.2-ի 22-24-րդ տողերով գնհատել բավարար:

«Վարարակն» ՓԲԸ-ն 10.05.2022թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Վարարակն» ՓԲԸ-ի կողմից 18.04.2022թ. ներկայացրած ԳԲՔԱ-ԼՕ-2022/69 ծածկագրով բողոքը:

Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ «Վարարակն» ՓԲԸ-ի համար միանշանակ անհասկանալի էր «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի շտկում կատարելու պահանջի վերաբերյալ կայացրած որոշումները, շտկման ծանուցումները, և որպես հետևանք նաև հայտը մերժելու մասին որոշումը: Դրանք բոլորը հստակ չէին, տալիս էին տարակերպ մեկնաբանությունների տեղիք,

ինչի մասին «Վարարակն» ՓԲԸ-ն հայտնել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի բողոքարկման ողջ ընթացքում:

Եվ միայն Ձեր վարույթում ԳԲՔԱ-ԼՕ-2022/69 ծածկագրով բողոքի քննության նվիրված նիստերի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչների կողմից տրված բանավոր պարզաբանումների և տեղի ունեցած քննարկումների արդյունքում պարզ դարձավ, թե գնահատող հանձնաժողովի կողմից ինչ անհամապատասխանություններ էին արձանագրվել և ի վերջո, գնահատող հանձնաժողովը ինչ ակնկալիք ուներ շտկումների մասով:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքի լրացմամբ «Վարարակն» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել «Վարարակն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,
2. ընդունել նոր որոշում՝ «Վարարակն» ՓԲԸ-ի հայտում անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ՝ հստակ և մանրամասն նկարագրելով հայտնաբերված անհամապատասխանությունները Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 20.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6873-2022 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Վարարակն» ՓԲԸ-ի կողմից 18.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին, ինչպես նաև ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը:

Պատվիրատուն 25.04.2022թ.-ին գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կրկին Ձեզ եմ ներկայացնում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2022 թվականի ապրիլի 15-ի N 02/16.4/3667-2022 գրությամբ ներկայացված գնահատող հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 14-ի N 4

արձանագրությունը, որտեղ հավաստի փաստերով, վերլուծություններով և համեմատական աղյուսակներով նկարագրված է ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի շրջանակներում «Վարարակն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված պոմպային սարքավորումների տեխնիկական անձնագիրը (Джилекс. Гарантия качества. Инструкция по эксплуатации. Циркуляционные насосы для систем отопления) հրավերի պահաջներին չհամապատասխանելու մասին:

Միաժամանակ հավաստում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:»

Պատվիրատուն 13.05.2022թ.-ին 13:10.-ին էլեկտրոնային փոստի միջոցով Ընկերության կողմից ներկայացված բողոքի լրացման վերաբերյալ ներկայացրել է դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Վարարակն» ՓԲ ընկերության կողմից 18.04.2022 թվականին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/69 ծածկագրով բողոքը, որի քննությանը նվիրված վերջին նիստը կայացել է 05.05.2022 թվականին:

Նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի ներկայացուցիչները հնարավորինս մանրամասն ներկայացրել են «Վարարակն» ՓԲ ընկերության հայտը մերժելու և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հիմնավորումները, որոնք ըստ էության բողոքի քննության նիստի ժամանակ ընդունեց նաև բողոքաբեր կողմը:

Սույն թվականի մայիսի 11-ին Ձեր կողմից ուղարկվել է «Վարարակն» ՓԲ ընկերության կողմից Ձեզ ուղղված բողոքի լրացումը, որով պահանջվում է պարտավորեցնել «ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Վարարակն» ՓԲ ընկերության հայտը մերժելու մասին որոշումը և ընդունել նոր որոշում, որով Ընկերությանը հնարավորություն կտրվի շտկել անհամապատասխանությունները՝ հնարավորինս մանրամասն նկարագրելով հայտնաբերված անհամապատասխանությունները:

Սույն միջնորդության վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ ըստ էության Ընկերությունը ներկայացված գրությամբ ընդունել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների իրավաչափությունը, թեև նշում է, որ դա հասկացել է միայն բողոքի քննության նիստի ժամանակ և արդյունքում պահանջում է ևս մեկ անգամ շտկման հնարավորություն տալ:

Նշված պահանջի հետ կապված հայտնում ենք, որ "Գնումների մասին" ՀՀ օրենսդրությունը կարգավորում է գնման ընթացակարգի ամբողջ ընթացքը, ինչով պայմանավորված ընկերությունների հայտերի գնահատման ժամանակ արդեն իսկ տրվել է հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն /22.02.2022թ. արձանագրություն N2-2/, որում առավել քան մանրամասն ներկայացված են հայտնաբերված անհամապատասխանությունները և բողոքի քննման առարկա հանդիսացող պոմպային սարքավորումների ներկայացման վերաբերյալ տեխնիկական պահանջի մասով պարզաբանում, որը ոչ թե գնահատող հանձնաժողովի մոտեցումն է արտացոլում՝ այլ նախագծող ընկերությունների կողմից հաշվարկված և նախագծով նախատեսված համանման սարքավորումների իրական տեխնիկական պահանջը, որը որևիցէ պարագայում չի կարող այլ կերպ մեկնաբանվել քան իրական պահանջն է: Նշված հարցի վերաբերյալ սույն բողոքի քննության ժամանակ գնահատող հանձնաժողովի ներկայացուցիչները ներկայացրել են նաև մի քանի հեղինակավոր լիցենզավորված ընկերությունների կողմից ներկայացված պարզաբանումներ, որոնք հավաստում են գնահատող հանձնաժողովի կողմից հնչեցրած ու արձանագրված տեխնիկական պահանջի իրավաչափությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը գտնում է, որ «Վարարակն» ՓԲ ընկերության կողմից ներկայացված միջնորդությունն ամբողջությամբ անհիմն է, այն ենթակա է մերժման և, որ նման պահանջի բավարարումը կհանգեցնի անհավասար մրցակցային պայմանների, քանի որ բոլոր ընկերություններին արդեն իսկ տրամադրվել է ներկայացված հայտերը շտկելու գնումների մասին օրենսդրությամբ սահմանված մեկ հնարավորություն, որից վերջիններս օգտվել են և դրա արդյունքում սույն ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովն ամփոփել է ներկայացված բոլոր հայտերը և կազմել է գնահատման նիստի արձանագություն:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/69 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 20.11.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝

Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 07.02.2022թ.-ին:

ii. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ մասի համաձայն:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վարարակն» ՓԲԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.04.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ի կատարումն 05.04.2022 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/24 որոշման՝ գնահատող հանձնաժողովը լրացուցիչ ուսումասիրել է «Վարարակն» ՓԲԸ-ի կողմից վերոնշյալ բողոքի շրջանակներում ներկայացված փաստաթղթերը /"Джилекс Циркуль" արտադրողի/ նշված պոմպային սարքավորումների տեխնիկական անձնագիրը, ինչի արդյունքում փաստում է, որ ի սկզբանե Ընկերության կողմից ներկայացված հայտերի գնահատման ժամանակ /հիմնական հայտեր, շտկված հայտեր/, թե 22.02.2022 թվականի թիվ 2-2 և 11.03.2022 թվականի թիվ 2-4 արձանագրությունները կազմելիս, նշված սարքավորումների /22-24 տողերով ներկայացված/ գնահատման ժամանակ հիմք է ընդունվել համացանցից գտնված նույն տեխնիկական անձնագիրը, որը և ներկայացվել է վերջինիս կողմից: Մասնավորապես՝ շտկված Հավելված 1.2-ում նշված՝ "Джилекс Циркуль" արտադրողի "32/40" մոդելի տեխնիկական բնութագրերը՝ համաձայն ներկայացված և գնահատման ժամանակ գտնված տեխնիկական բնութագրերի, այն է, որ ներկայացված է "Джилекс Циркуль" արտադրողի "32/40" մոդելի պոմպի աշխատանքի կորը՝ համաձայն որի Հրավերի Հավելված 1.2-ի 22-24 տողերով պահանջվող՝ 22-րդ տողում նշված -"Շրջանառու պոմպ, Մ=2.6խմ/ժ, Հ=3.0մ", 23-րդ տողում նշված "Շրջանառու պոմպ, Մ=2.3խմ/ժ, Հ=3.0մ" և 24-րդ տողում նշված -"Շրջանառու պոմպ, Մ=2.0խմ/ժ, Հ=3.0մ" պոմպերի համար սահմանված է Հ=3.0մ բնութագիր, իսկ այդ պահանջվող բնութագրի դեպքում առաջարկվող "Джилекс Циркуль" արտադրողի 32/40 մոդելի դեպքում, տվյալ սարքավորման արտադրողականությունը /ջրաքանակ-խմ/ժ չափման միավորով/ կազմում է 20լ/րոպե կամ 20լ/րոպե Х 60 րոպե=1200լ/րոպե կամ 1.2 խմ/ժ, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Այսինքն 22-24 տողերի համար Հ=3.0մ բնութագրի դեպքում՝ համապատասխանաբար 2.6, 2.3 և 2.0 խմ/ժ ջրաքանակ արտադրողականության փոխարեն "Джилекс Циркуль" արտադրողի 32/40 մոդելը ապահովում է 1.2 խմ/ժ ջրաքանակ հզորություն: Արդյունքում Հանձնաժողովը կրկին արձանագրել է, որ «Վարարակն» ՓԲԸ-ի կողմից Հավելված 1.2-ի 22-24-րդ տողերով ներկայացրած "Джилекс Циркуль" արտադրողի 32/40 մոդելի տեխնիկական բնութագրերը չի

համապատասխանում հրավերով սահմանված սարքավորումների տեխնիկական բնութագրերին՝ այն ունի էապես ավելի քիչ ջրաքանակի արտադրողականություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հավելված 1.2-ի 22-24-րդ տողերով «Վարարակն» ՓԲԸ-ի հայտը վերոգրյալ հիմնավորմամբ ենթակա է մերժման, ուստի Հանձնաժողովը նպատակահարմար չի գտել 11.03.2022 թվականի թիվ 2-4 արձանագրությամբ նույն մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.2-ի 63-րդ տողի համար մասնակցից պահանջել շտկում՝ առավել մասնրամասն նշելով արձանագրված անհամապատասխանության բնույթը՝ չնայած նրան, որ Հանձնաժողովի գնահատմամբ 22.02.2022 թվականի թիվ 2-2 և 11.03.2022 թվականի թիվ 2-4 արձանագրություններում արդեն իսկ հնարավորինս մանրամասն ներկայացվել է արձանագրված անհամապատասխանության բնույթը, քանի որ անգամ 63-րդ տողի հնարավոր շտկման պարագայում մասնակցի հայտը ենթակա է մերժման Հավելված 1.2-ի 22-24-րդ տողերով ներկայացված սարքավորումների անհամապատասխանության հիմքով:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով սույն արձանագրությամբ ներկայացված հիմնավորումները, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, որոշել է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Վանի» ՍՊԸ-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Վարարակն» ՓԲԸ-ի կողմից 18.04.2022թ.-ին ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին

հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները, իսկ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը բացում և գնահատում է հայտերը:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝

հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 20.11.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-

րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են

անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնահատող հանձնաժողովը բացում և գնահատում է հայտերը և դրանց մասին կազմում է արձանագրություն, որը գնման ձևին համապատասխան պարունակում է հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները, իսկ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 20.11.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վարարակն» ՓԲԸ-ի կողմից Հավելված 1.2-ի 22-24-րդ տողերով ներկայացրած "Джилекс Циркуль" արտադրողի 32/40 մոդելի տեխնիկական բնութագրերը չի համապատասխանում հրավերով սահմանված սարքավորումների տեխնիկական բնութագրերին՝ այն ունի էապես ավելի քիչ ջրաքանակի արտադրողականություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հավելված 1.2-ի 22-24-րդ տողերով «Վարարակն» ՓԲԸ-ի հայտը վերոգրյալ հիմնավորմամբ ենթակա է մերժման, ուստի Հանձնաժողովը նպատակահարմար չի գտել 11.03.2022 թվականի թիվ 2-4 արձանագրությամբ նույն մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.2-ի 63-րդ տողի համար մասնակցից պահանջել շտկում՝ առավել մասնրամասն նշելով արձանագրված անհամապատասխանության բնույթը, քանի որ անգամ 63-րդ տողի հնարավոր շտկման պարագայում մասնակցի հայտը ենթակա է մերժման Հավելված 1.2-ի 22-24-րդ տողերով ներկայացված սարքավորումների անհամապատասխանության հիմքով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, համադրելով Ընկերության կողմից ներկայացված փաստական հանգամանքները Պատվիրատուի կողմից ներկայացված տվյալներին, ուսումնասիրելով Հանձնաժողովի 14.04.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությունը և հրավիրված նիստերով ներկայացած ներկայացուցիչների տված բանավոր հայտարարություններն ու բացատրությունները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի՝ Ընկերության հայտը գնահատելու և մերժելու մասին կայացված արձանագրությունը, Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերի իմաստով, չի պարունակում Ընկերության հայտի գնահատման արդյունքները և հայտի մերժման հիմնավորումը, մասնավորապես՝ Հանձնաժողովը նշել է, որ «Վարարակն» ՓԲԸ-ի կողմից Հավելված 1.2-ի 22-24-րդ տողերով ներկայացրած "Джилекс Циркуль" արտադրողի 32/40 մոդելի տեխնիկական բնութագրերը չի համապատասխանում հրավերով սահմանված սարքավորումների տեխնիկական բնութագրերին, ուստի Ընկերության հայտը ենթակա է մերժման: Այնուհետև Հանձնաժողովը, առանց «Վարարակն» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում կայացնելու, որոշել է «Վանի» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ չճանաչելով վերջինիս որպես ընտրված մասնակից, որպիսի պայմաններում, Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերի նախատեսված դրույթների խախտում:

Միաժամանակ, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը, Ընկերության կողմից Հավելված 1.2-ով ներկայացված 63-րդ տողի համար շտկում չպահանջելով և առավել մասնրամասն չնկարագրելով արձանագրված անհամապատասխանության բնույթը, գործել է ոչ իրավաչափ, ինչի արդյուքնում թույլ է տվել Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջների խախտում:

Հարկ է նկատել, որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի իմաստով, մասնակցի հայտը գնահատվում է հրավերի պահանջների նկատմամբ ու այդ պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների դեպքում է միայն հնարավոր կիրառել նշված դրույթները և շտկման մասին ծանուցում ուղարկել մասնակցին:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից 13.05.2022թ.-ին ներկայացված դիրքորոշմանը, ապա Բողոքներ քննող անձն այն քննարկման առարկա չի դարձնում, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց գործունեության» կարգի 19-րդ կետով սահմանվել է, որ Անձը պարտավոր է որոշման մեջ հիմնավորված և պատճառաբանված ձևով անդրադառնալ բողոքարկման գործընթացի կողմերի՝ մինչև բողոքը բավարարելու կամ

մերժելու մասին որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրը ներառյալ ներկայացրած փաստաթղթերում, գրավոր դիրքորոշումներում, ներկայացված ապացույցներում բերված բոլոր փաստարկներին, տեղեկագրում և/կամ էլեկտրոնային գնումների համակարգում հրապարակված նյութերին:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ վերոնշյալ դրույթը ինքնանպատակ չէ և ուղղված է ապահովելու հենց առաջինը բողոքարկման ընթացակարգին ներգրավված կողմերի հավասար մրցակցության իրավունքը, քանի որ յուրաքանչյուր կողմ իրավունք ունի ծանոթանալու և իր դիրքորոշումը հայտնելու մյուս կողմի կողմից ներկայացրած ցանկացած փաստաթղթի: Իսկ սույն դեպքում՝ Պատվիրատուն գրությունը ներկայացրել է որոշման հրապարակման նույն օրը, որը չի կարող Բողոքներ քննող անձի կողմից դիտարկվել (քննարկման առարկա դարձվել)՝ վերը նշված պատճառաբանություններով պայմանավորված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ հիմնավոր են, ուստի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 20.11.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Վարարակն» ՓԲԸ-ի հայտն ըստ էության մերժելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ՝ որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը, ինչով պայմանավորված Ընկերության կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վարարակն» ՓԲԸ-ի կողմից 18.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/69 ծածկագրով բողոքը բավարարել:

1. Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Վարարակն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում:
- ընդունել «Վարարակն» ՍՊԸ-ի հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**